Արձանագրություն N 7

ՀՀ Ազգային ժողովի կարիքների համար սառնարանների և հեռուստացույցների ձեռքբերման նպատակով
կազմակերպված ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-24/21 ծածկագրով գնման ընթացակարգի
/այսուհետ նաև՝ Ընթացակարգ/ գնահատող հանձնաժողովի նիստի

22 ապրիլի 2024թ.
ժամը՝ 11:00

ք. Երևան, Բաղրամյան 19

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Վ.Հարությունյան

Հանձնաժողովի անդամներ՝ Լ.Լևոնյան*, Վ.Թորոսյան, Ա.Լալայան

Հանձնաժողովի քարտուղար՝ Հ.Սաղաթելյան

*նիստից բացակայում է Լևոն Լևոնյանը

1. Տվյալներ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերի՝ /հայտում առկա փաստաթղթեր, ինչպես նաև Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր/ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու և նիստը կասեցնելու մասին

1.1 Նիստը վերսկսվեց 22.04.2024 թվականին: Ի պատասխան ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի գրության, 19.04.2024 թվականին ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից ստացվել է պատասխան գրություն, համաձայն որի ՆԱՌ-ԱՎ ՍՊԸ-ն և «Փի-Լենդ» ՍՊԸ-ն չեն հանդիսանում փոխկապակցված անձինք: Հանձնաժողովը որոշեց շարունակել նիստը և ուսումնասիրել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների հայտերը:

1.2 Հանձնաժողովն ուսումնասիրելով eauction.armeps.am համակարգի կողմից առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներ՝ ՆԱՌ-ԱՎ ՍՊԸ-ի և ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտերը /հայտում առկա փաստաթղթեր, ինչպես նաև Համակարգ մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր/, արձանագրեց՝

- **ՆԱՌ-ԱՎ ՍՊԸ-ի** կողմից ներկայացրած հայտում առկա են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես՝

- Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունում՝ /Հավելված 1/ 1-ին կետում ներկայացվել է Հրավերի պահանջներին անհամապատասխան՝ թերի տեղեկատվություն, մասնավորապես՝ «1) բավարարում է ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, ընթացակարգի հրավերով սահմանված կարգով և ժամկետում ներկայացնել որակավորման ապահովում» նախադասությունը անհրաժեշտ է խմբագրել նշելով՝ «1) «ՆԱՌ-ԱՎ ՍՊԸ-ն և իրեն փոխկապակցված անձինք բավարարում են ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-24/21 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և ՆԱՌ-ԱՎ ՍՊԸ-ն պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, ընթացակարգի հրավերով սահմանված կարգով և ժամկետում ներկայացնել որակավորման ապահովում»:

- eauction.armeps.am համակարգ մուտքագրված /լրացված/ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում՝ «Ապրանքային նշան» և «Արտադրող» սյունակները ենթակա են շտկման, անհրաժեշտ է նկարագրել /նշել/ առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը և արտադրողը: «Տեխնիկական բնութագիր» սյունակում «....ընդհանուր ծավալը՝ 120-125լ. (օգտակար ծավալը՝ 93-95լ.)», ինչպես նաև կենցաղային սառնարանների չափսերը՝ «85-87*48-50*45-47սմ» նշված են միջակայքերով, անհրաժեշտ է հստակեցնել: «Երաշխիքային ժամկետը՝ առնվազն 2 տարի» հատկանիշում առկա է «առնվազն» բնութագրիչը, մինչդեռ անհրաժեշտ է հստակ նշել երաշխիքային ժամկետը:

- **«ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացրած հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը և կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

Հիմք ընդունելով վերոգրյալը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետով, Հանձնաժողովը որոշեց 22.04.2024թ. նիստը կասեցնել՝ Համակարգի միջոցով ծանուցել առաջին տեղ զբաղեցրած մասնակից ՆԱՌ-ԱՎ ՍՊԸ-ին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում Համակարգի միջոցով շտկել անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի մասին

Հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստը նշանակել 25.04.2024թ. ժամը 11:00-ին, ք. Երևան, Մ. Բաղրամյան պողոտա 19 հասցեում:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Վարդան Հարությունյան

անդամներ՝ _____ Վարդան Թորոսյան

_____ Անժելա Լալայան

քարտուղար՝ _____ Հերմինե Սաղաթելյան